

Newsletter

Delegation of the European Union to Armenia

March/April 2011 #2(7)

Focus On/խոշոր պլան

Armenia-EU cooperation: *present and future*

Cooperation between the EU and Armenia has visibly progressed over the last two years. The work of the EU Advisory Group is one of the contributing factors. The Team Leader of the EU Advisory Group to Armenia, Antti Hartikainen, stresses that the strengthening of relations between the EU and Armenia through the future Association Agreement is very important.

- What are the main achievements of the activities undertaken by the EU Advisory Group in Armenia?

- The first two phases of the EU Advisory Group project were implemented from November 2008 - July 2010. I joined the EU Advisory Group in mid-December 2010 when the project was restarted after a six-month pause. Among the main achievements I would like to mention the following: the inauguration of the Diplomatic Academy on 15 February 2010. The establishment of the Academy was supported by the EU Advisory Group, UNDP and OSCE. Then, the creation of the EU Export Helpdesk and the completion of the Human rights baseline study. There were also a lot of positive developments in areas of activity like trade, public administration reform, migration issues, border management and visa facilitation.

- What steps have already been undertaken for the visa facilitation process and what kind of reform is expected?

- In the near future we expect to start work towards an agreement on visa facilitation, which will simplify the visa process, make it cheaper and enhance people to people contact between the EU and Armenia. Depending on the

outcome of the negotiations, it will be easier for many groups of people, such as diplomats, students, scientists, artists and others to obtain a visa. Applications for visas will also be processed more quickly. There will be a limitation on the number of days that your request should be processed. Of course also the process of applying will become more easily understandable for people.

- What issues does Armenia face regarding EU integration?

- First of all, when we speak about EU-Armenia cooperation and ongoing Association Agreement negotiations we must bear in mind the fact that the EU and Armenia need to be equal partners and with this I mean that both sides need to have equal capacity to negotiate. The EU Advisory Group is to assist Armenia in this effort. Here arises the question of the capacity of public administration. Next is how to make ordinary people aware of the advantages of EU integration and of its expected results. What are the advantages for this person in Yerevan, or that person living in countryside? These are the questions that must be answered to motivate people to support the Armenian way towards Europe integration.



EU Advisory Group Team Leader Mr. Antti Hartikainen
ԵՄ Խորհրդատվական խմբի ղեկավար
պրոֆ. Անթի Հարթիկայնեն

Հայաստան-ԵՄ համագործակցություն. ներկյալն և ապագան

Հայաստան-ԵՄ քաղաքական համագործակցությունը տեսանելիորեն զարգացել է վերջին երկու տարիների ընթացքում և դրան նպաստում է ԵՄ Խորհրդատվական խմբի արդյունավետ աշխատանքը: Խորհրդատվական խմբի ղեկավար պրոֆ. Անթի Հարթիկայնենը ընդգծում է, որ այս համագործակցությունն անչափ կարևոր է:

Ստորև ներկայացնում ենք պարոն Անթի Հարթիկայնենի նկատառումները վերոնշյալ հարցի վերաբերյալ.

- Որո՞նք են Խորհրդատվական խմբի հիմնական նվաճումները Հայաստանում:

- Մեր առաքելության առաջին երկու փուլն իրականացվել է 2008 թ. նոյեմբերից մինչև 2010 թ. հուլիսը: Ես միացել եմ Խորհրդատվական խմբին 2010 թ. դեկտեմբերի կեսին, երբ ծրագրով, 6-ամսյա ընդմիջումից հետո, վերսկսել է աշխատանքը: Կարևորագույն նվաճումներից կնշեի հետևյալը. Դիվանագիտական ակադեմիայի բացումը, որը տեղի է ունեցել 2010 թ. փետրվարի 15-ին: Ակադեմիան հիմնադրվել է ԵՄ Խորհրդատվական խմբի, ՄԱԶԾ-ի և ԵԱԿԿ-ի աջակցությամբ: Կարևորում են նաև

ԵՄ Արտահանման տեղեկատվի ստեղծումը և Հայաստանում մարդու իրավունքների ոլորտի իրավիճակի ուսումնասիրության ավարտը: Շատ մեծ աշխատանք է տարվել նաև առևտրի, հանրային կառավարման, միգրացիայի, սահմանային կառավարման ոլորտներում, վիզաների տրամադրման գործընթացում:

- Ի՞նչ քայլեր են արվել վիզաների տրամադրման գործընթացի բարելավման համար և ի՞նչ բարեփոխումներ են նախատեսվում:

- Ակնկալում ենք մոտ ապագայում այս հարցի վերաբերյալ համաձայնագրի վրա սկսել աշխատել, որը կհեշտացնի, ավելի մատչելի կդարձնի վիզա ստանալու գործընթացը և կխթանի ԵՄ-ի ու Հայաստանի միջև մարդկանց շփումը: Կախված բանակցությունների արդյունքից, վիզայի ստացումն ավելի կհեշտանա որոշակի խմբերի մարդկանց համար՝ դիվանագետների, ուսանողների, գիտնականների, արվեստագետների և այլն: Վիզա ստանալու դիմումները նույնպես ավելի արագ կուսումնասիրվեն: Կսահմանվեն ժամկետներ դիմումների ընթացք տալու համար: Հետևաբար, այդ գործընթացը կդառնա ավելի ոլորտի, պարզ և հասկանալի:

- Ի՞նչ խնդիրների առաջ է կանգնած Հայաստան-ԵՄ-ին ինտեգրվելու ճանապարհին:

- Երբ մենք խոսում ենք ԵՄ-Հայաստան համագործակցության և Ասոցացման համաձայնագրի շուրջ ընթացող բանակցությունների մասին, առաջին հերթին պետք է գիտակցենք, որ և՛ Եվրամիությունը, և՛ Հայաստանը պետք է լինեն հավասար գործընկերներ, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի երկու կողմերն էլ բանակցային գործընթացում հավասար հնարավորություններ ունենան: Այս գործում Հայաստանին օգնում է ԵՄ Խորհրդատվական խումբը: Այստեղ առաջ է գալիս հանրային կառավարման արդյունավետության հարցը: Հաջորդ խնդիրը՝ շարքային քաղաքացիներին եվրամիությունում առավելությունների և վերջնական արդյունքների մասին տեղեկացնելն է. որո՞նք են առավելությունները ՀՀ քաղաքացիների կամ երևանից դուրս ապրողների համար: Սրանք այն հարցերն են, որոնց պատասխանները մարդկանց համար շարժառիթ կդառնան՝ ԵՄ ինտեգրմանը տանող հայաստանյան ուղին խրախուսելու համար:

Announcement/Հայտարարություն

«My Europe in 120 Seconds»

On 9 May the EU celebrates Europe Day with a number of events that bring Europe closer to its citizens and neighbours. This year the EU Delegation to Armenia announces a youth video competition on the theme "My Europe in 120 Seconds". The contest is aimed at revealing how young people perceive Europe and how they creatively express their thoughts about EU-Armenia cooperation. The winner will receive an Apple iPad.

The celebrations of Europe Day in Armenia will take place on **21 May 2011 at Lovers' Park**, where the winner will be announced.

For more details visit: www.europeinarmenia.wordpress.com

«Իմ Եվրոպան 120 վայրկյանում»

Մայիսի 9-ին մի շարք միջոցառումներով ԵՄ-ն նշում է Եվրոպայի օրը՝ նպաստելով Եվրոպայի հասանելիությանը ինչպես իր, այնպես էլ հարևան պետությունների քաղաքացիների համար: Այս տարի Հայաստանում ԵՄ պատվիրակությունը հայտարարել է տեսահոլովակների երիտասարդական բաց մրցույթ՝ «Իմ Եվրոպան 120 վայրկյանում» խորագրով: Մրցույթի նպատակն է բացահայտել երիտասարդների՝ Եվրոպայի վերաբերյալ կարծիքները, խրախուսել ստեղծագործաբար արտահայտելու ԵՄ-Հայաստան համագործակցության վերաբերյալ նրանց մտքերը: Մրցույթի հաղթողը կստանա Apple iPad:

Հայաստանում Եվրոպայի օրվան նվիրված տոնախմբությունը տեղի կունենա **2011թ. մայիսի 21-ին Սիրահարների այգում**, որտեղ և կհայտարարվեն մրցույթի արդյունքները:

Մանրամասների համար այցելեք՝ www.europeinarmenia.wordpress.com

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Մարտ/ապրիլ 2011 #2(7)

Towards European Integration

The “Participatory European Integration” conference was jointly organised by AEPLAC and ICHD in Yerevan on 25 March 2011. The topic of the conference was the role of the Armenian government, parliament and civil society in the European integration process. The Deputy Minister of Foreign Affairs, Karine Kazinian, said that the Association Agreement between Armenia

and the EU, for which negotiations have been ongoing since July 2010, will bring new prospects for political association and economic integration with the EU. Participants stressed that initiatives made by officials require the involvement of civil society, which is why access to information and cooperation between state institutions and civil society are necessary.

Եվրասիական ճանապարհով

2011 թ. մարտի 25-ին Երևանում տեղի է ունեցել Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի և Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի կազմակերպած համաժողով՝ «Մասնակցային եվրոպական ինտեգրում» խորագրով: Համաժողովի թեման Հայաստանի կառավարության, խորհրդարանի և քաղաքացիական հասարակության դերի հստակեցումն էր եվրոպական ինտեգրման գործընթացում: ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Կարինե Դազինյանը նշել է, որ Հայաստանի և ԵՄ միջև Աստղացման

համաձայնագրի ստորագրումը, որի շուրջ բանակցությունները մեկնարկել են 2010 թ. հուլիսին, նոր հեռանկարներ կբացի ԵՄ-ի հետ քաղաքական աստղացման և տնտեսական ինտեգրման համար: Մասնակիցներն ընդգծել են, որ քաղաքական գործիչների կողմից առաջարկված գաղափարները պետք է քաղաքացիական հասարակության հավանությանն արժանանան: Ուստի շատ կարևոր են իրազեկվածությունն ու համագործակցությունը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև:



Exporting to the European market

Exports are very important in the economic development of any country. Businessmen need accurate information about potential markets, tariffs and other business regulations in order to prepare successful transactions. With the aim to improve the access of Armenian entrepreneurs to the EU market, the Armenian-European Policy and Legal Service Centre (AEPLAC), together with the EU Advisory Group, developed the *Export Roadmap for*

Armenia and presented it in Yerevan on 24 March. The manual will assist exporters who wish to be informed about demand in European markets, international trade contracts and possible advantages. In addition, it gives details on the step-by-step export process. Armenian exporters can also find information on exporting to the EU through the EU Export Helpdesk, now published in six languages (including Russian): <http://exporthelp.europa.eu>.

Արտահանում դեպի եվրոպական շուկա

Արտահանումը յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն ունի: Արդյունավետ գործարքներ իրականացնելու համար գործարարներին անհրաժեշտ է ստույգ տեղեկատվություն՝ հնարավոր շուկաների ու նաև արտերկրյա մաքսային և այլ օրենսդրական առանձնահատկությունների մասին: Հայ արտահանողների մուտքը ԵՄ շուկա խթանելու նպատակով Քաղաքական և իրավաբանական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնը (AEPLAC/ԱԵՊԼԱԿ) ԵՄ խորհրդատվական խմբի հետ համատեղ մշակել է «Ուղեցույց հայաստանյան արտահանողների համար» ձեռնարկը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել Երևանում 2011 թ. մարտի 24-ին: Ուղեցույցը արտահանողներին հնարավորություն կտա տեղեկություններ ստանալ արտահանման պահանջարկի մասին եվրոպական այս կամ այն երկրում, ծանոթանալ միջազգային առևտրային համաձայնագրերին և տեղեկանալ հնարավոր արտոնություններին: Ուղեցույցը նաև մանրամասն ներկայացնում է արտահանման ողջ գործընթացը: Ի դեպ, այս ձեռնարկում ամփոփված տեղեկությունները կարելի է գտնել նաև <http://exporthelp.europa.eu> կայքում, որտեղ տեղեկատվությունը ներկայացված է 6 լեզվով, այդ թվում ռուսերենով:



Children's participation

Children have the right to healthcare, education and appropriate conditions for their development. They also should be protected from violence and exploitation. However, not everyone understands that the participation of children is a basic right. A report of the UN Committee on the Rights of the Child states that children's opinions are frequently disregarded, a problem targeted by an EU-supported project in Armenia. The Regional Children Action for Participation project began in Yerevan on 25 March.

children's interest in their rights. “We should protect children's rights, including their right to have their own opinion and the right to express that opinion. This is the goal of this programme, which will be implemented in the Southern Caucasus”, said the Head of the EU Delegation to Armenia H.E. Raul de Luzenberger.

Today all the preparatory work is complete and target schools have been chosen. Facilitators should work to help children reveal problems connected with violations of children's rights and eventually protect their own rights by themselves and by informing adults. The Country Director of Save the Children Armenia, Irina Saghoyan, noted that “rights are also closely tied with responsibility, another idea which must be encouraged among children.”

The programme is being funded by the European Union and implemented by Save the Children in partnership with The Future Is Yours local NGO. It works with 20 schools in Yerevan and 5 other provinces, covering approximately 10,000 children of different social backgrounds. Its specific activities will encourage

Հանուն երեխաների մասնակցության

Երեխաներն ունեն առողջապահության, կրթության և իրենց զարգացման համար կյանքի պատշաճ պայմանների իրավունք: Նրանք պետք է նաև պաշտպանված լինեն բռնությունից և շահագործումից: Սակայն ոչ բոլորին է հայտնի, որ երեխաների հիմնական իրավունքներից է նաև երեխաների՝ իրենց վերաբերող հարցերի քննարկումներին անմիջական մասնակցության իրավունքը: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի զեկույցում նշված է, որ երեխաների կարծիքները հաճախ անտեսվում են և հաշվի չեն առնվում: Ս.թ. մարտի 25-ին Երևանում մեկնարկել է «Տարածաշրջանային նախաձեռնություն» հանուն երեխաների մասնակցության» ծրագիրը: Այն ֆինանսավորվում է Եվրամիության կողմից և իրականացնում է «Պաշտպանեք երեխաներին» (Save the Children) կազմակերպությունը՝ «Ապագան քոնն է» տեղական իկ-ի հետ համատեղ: Ծրագիրը կգործի Երևանի և 5 մարզերի 20 դպրոցներում, դրանից կօգտվի տարբեր սոցիալական խավերի շուրջ 10 000 երեխա:

Ծրագիրը կխրախուսի երեխաների՝ իրենց իրավունքների նկատմամբ հետաքրքրվածությունը: «Մենք պետք է պաշտպանենք երեխաների իրավունքները, այդ թվում՝ սեփական կարծիք ունենալու և այն արտահայտելու իրավունքը: Սա է ծրագրի նպատակը, որը կիրականացվի Հարավային Կովկասում», - ասել է Հայաստանում ԵՄ ակտիվիստության ղեկավար պարոն Ռաուլ դե Լուզենբերգերը:

Արդեն ավարտված են նախապատրաստական աշխատանքները, ընտրված են դպրոցները: Ծրագրի աշխատակիցները կօգնեն երեխաներին բացահայտելու այն խնդիրները, որոնք կապված են իրենց իրավունքների խախտումների հետ, և ի վերջո՝ կսովորեցնեն պաշտպանել իրենց իրավունքներն ինչպես ինքնուրույն, այնպես էլ՝ մեծերին իրազեկելու միջոցով: «Պաշտպանեք երեխաներին. Հայաստան» կազմակերպության տնօրեն Իրինա Սաղոյանը նշել է. «Իրավունքներն անբաժան են պարտականություններից, ինչը ևս մի գաղափար է, որը պետք է սերմանել երեխաների մեջ»:



Interconnected Europe



The European Commission has presented a new European transport plan which aims to create an integrated European transport zone by connecting Europe's road, rail, water and air networks.

The plan (with goals to be met by 2050) focuses on facilitating travel between and within cities, as well as long distance journeys. It calls for:

- cities to completely phase out petrol cars;
- shifting to rail or water 50% of all passenger and freight road transport currently making intercity journeys of more than 300km;
- airlines to increase their use of sustainable low-carbon fuels to 40%;
- shipping to cut 40% off its carbon emissions.

Reaching these targets would help the EU achieve a 60% cut in greenhouse gases from all modes of transport and the region's dependence on imported oil by 2050.

The EU would extend and coordinate "user pays" and "polluter pays" principles to finance its transport infrastructure.

The vision of Interconnected Europe also envisages:

- encouraging new technologies, fuels and traffic management systems;
- coordinating by 2020 the management of national air traffic control systems through the EU Single European Sky programme, and extending this to the 58 countries of the European Common Aviation Area;
- deploying intelligent transport management systems;
- halving road casualties by 2020 and close to zero fatalities by 2050.

More: http://ec.europa.eu/news/transport/110328_en.htm

Փոխկապակցված Եվրոպա

Եվրոպական հանձնաժողովը ներկայացրել է Եվրոպայի նոր տրանսպորտային նախագիծ, որը ենթադրում է ստեղծել միասնական եվրոպական տրանսպորտային գոտի՝ փոխկապակցելով Եվրոպայի ավտոճանապարհային, երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի համակարգերը:

Նախագիծը, որը ենթադրվում է իրականացնել մինչև 2050 թվականը, ուղղված է միջքաղաքային, ներքաղաքային, ինչպես նաև երկարատև ուղևորությունները դյուրին դարձնելուն:

- Նախագիծը կոչ է անում
- քաղաքներում հրաժարվել բենզինով աշխատող մեքենաներից,
 - ավելի քան 300 կմ տարածություն միջքաղաքային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների առնվազն 50 տոկոսը կատարել երկաթգծի կամ ջրային տրանսպորտի միջոցով,
 - մինչև 40% ավելացնել կայուն ածխածնային վառելիքի կիրառումը ավիաընկերություններում,
 - կրճատել առևտրային նավերից ածխաթու գազի արտանետումը:

Նախագծի իրագործումը կնպաստի, որպեսզի ԵՄ-ն մինչև 2050 թ. կրճատի տրանսպորտային միջոցների արտանետած ածխաթու գազի 60%-ը և նվազեցնի տարածաշրջանի կախվածությունը ներկրվող նավթի ծավալներից:

Ծրագրի տրանսպորտային ենթակառուցվածքները ֆինանսավորելու համար ԵՄ-ն կմշակի «վճարում է օգտագործողը» և «վճարում է աղտոտողը» սկզբունքները և կհամակարգի դրամը:

Փոխկապակցված Եվրոպայի այս տեսլականը նաև նպատակ ունի՝

- խրախուսելու նոր տեխնոլոգիաների, վառելիքի ու տրանսպորտի կառավարման համակարգերի զարգացումը
- համակարգելու ազգային ավիափոխադրումների վերահսկումը «ԵՄ-ի միացյալ եվրոպական օդային տարածք» ծրագրի միջոցով և մինչև 2020 թվականը տարածելու այն Եվրոպայի միասնական ավիացիոն գոտու մեջ մտնող 58 երկրներում:
- տեղակայելու տրանսպորտային միջոցների կառավարման արդյունավետ համակարգեր,
- 50%-ով կրճատելու ավտոճանապարհային պատահարների թիվը մինչև 2020 թ. և մինչև 2050 թ. 0-ի հասցնելու զոհերի թիվը:

Hello Europe

Hundreds of young Armenians go abroad, mainly to European countries, to continue their education. Many others go there for tourism. However, they are often not ready for the cultural, economic and political issues they might face. To provide information on EU history, structure and EU-Armenia relations, a pilot project started in two Armenian high schools. The project incorporates a manual for students, *Hello Europe*, in the regular high school curriculum. The manual and initiative was developed with the support

of the Armenian-EU Legal Policy Centre, in cooperation with the Eurasia Partnership Foundation, the EU Delegation to Armenia and the Armenian Ministry of Education and Science.

A methodology for teachers was developed to support the new EU lessons. Teachers were subsequently trained how to use the methodology and manual on 19-20 March 2011 in Tsakhkadzor. The author of *Hello Europe*, Gayane Terzyan, said that this book should not be seen as a completed

project, because new documents are constantly signed and changes made almost every day, which teachers should follow.

The book is a tool not only for high school students, but can also be helpful for university students. Young specialists from Yerevan State University had the opportunity to ask questions about Europe to the Head of the EU Delegation to Armenia and acquaint themselves with the *Hello Europe* manual on 23 March 2011.



«Բարև՝ Եվրոպա»

Հարյուրավոր հայ երիտասարդներ մեկնում են արտասահման, հատկապես եվրոպական երկրներ, իրենց ուսումը շարունակելու նպատակով: Ոմանք էլ՝ որպես զբոսաշրջիկ: Բայց հաճախ նրանք պատրաստ չեն լինում այն մշակութային, տնտեսական ու քաղաքական մարտահրավերներին, որոնց հանդիպում են այդ երկրներում: ԵՄ պատմության, կառուցվածքի և ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով Հայաստանի ավագ դպրոցներից երկուսում մեկնարկել է փորձնական ծրագիր: Այն նախատեսում է «Բարև՝ Եվրոպա» ուսումնական ձեռնարկի ներառումը դպրոցական ծրագրում: Ձեռնարկը մշակվել է Քաղաքական և իրավաբանական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC/ԱԵՊԼԱԿ) նախաձեռնությամբ՝ «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի, Հայաստանում ԵՄ պատվիրակության և ՀՀ կրթության ու գիտության նախարարության հետ համատեղ:

ԵՄ վերաբերյալ դասերը խթանելու նպատակով դասավանդման մեթոդաբանություն է մշակվել ուսուցիչների համար: 2011 թ. մարտի 19-20-ը Ծաղկածորում ուսուցիչների համար համապատասխան վերապատրաստում է անցկացվել:

«Բարև՝ Եվրոպա» ձեռնարկի հեղինակ Գայանե Թերզյանն իր խոսքում նշել է, որ այս գիրքը չի կարելի դիտարկել որպես ավարտված, ամփոփ ձեռնարկ, քանի որ ամեն օր նոր փաստաթղթեր են ստորագրվում, ինչ-որ փոփոխություններ են տեղի ունենում, որոնց ուսուցիչները պետք է հետևեն: Գիրքը նախատեսված է ոչ միայն ավագ դպրոցների աշակերտների համար, այն կարող է օգտակար լինել նաև համալսարանականներին: Մարտի 23-ին Երևանի պետական համալսարանի երիտասարդ մասնագետները հնարավորություն ունեցան անձամբ ուղղել Եվրոպայի վերաբերյալ իրենց հարցերը Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լուցենբերգերին և ծանոթանալ «Բարև՝ Եվրոպա» ձեռնարկին:

- European Parliament
- European Council
- Council of the EU
- European Commission
- Court of Justice of the EU
- European Central Bank
- Court of Auditors

Եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ) հիմնադրվել է 1998 թվականին՝ «Եվրոպական միության մասին» համաձայնագրով: Այն իրավասուբյեկտությամբ օժտված վերաբնակարան կառույց է: ԵԿԲ-ն կոչված է կառավարելու եվրոն: ԵՄ-ի միասնական արժույթը և պահպանելու գնեթի կայունությունը ԵՄ-ի բնակչության ավելի քան երկու երրորդը կազմող այն քաղաքացիների համար, ովքեր օգտագործում են այն: ԵԿԲ-ն նաև պատասխանատու է ԵՄ-ի տնտեսական և արժույթային քաղաքականության մշակման և կենսագործման համար:

Իր դերը կատարելու համար ԵԿԲ-ն համագործակցում է Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգի (ԿԲԵՀ) հետ, որն ընդգրկում է ԵՄ 27 պետությունները: Այնուամենայնիվ, մինչ օրս այդ երկրներից միայն 16-ն են ընդունել եվրոն: Այդ 16 երկրները միասին կազմում են «Եվրոյի գոտին», իսկ նրանց կենտրոնական բանկերը, Եվրոպական կենտրոնական բանկի հետ մեկտեղ, կազմում են այսպես կոչված «Եվրո-համակարգը»:



ԵԿԲ-ն գործում է լիովին անկախ: Ո՛չ ԵԿԲ-ն, ո՛չ Եվրոհամակարգի ազգային կենտրոնական բանկերը, ո՛չ էլ այդ հաստատությունների որոշում կայացնող մարմինների որևէ անդամ չեն կարող խնդրել կամ ցուցումներ ստանալ որևէ այլ մարմնից: ԵՄ հաստատությունները և անդամ-պետությունների կառավարությունները պարտավոր են հարգել այս սկզբունքը և չփորձել ազդել ԵԿԲ-ի կամ ազգային կենտրոնական բանկերի վրա:

Սերտորեն փոխգործակցելով ազգային կենտրոնական բանկերի հետ՝ ԵԿԲ-ն նախապատրաստում և կյանքի է կոչում Եվրոհամակարգի՝ որոշում կայացնող մարմինների՝ Ղեկավարող խորհրդի, Գործադիր խորհրդի և Ընդհանուր խորհրդի կողմից կայացվող որոշումները:

2003 թ. նոյեմբերից ԵԿԲ-ի նախագահի պաշտոնը զբաղեցնում է Ժան-Կլոդ Տրիշենը՝ Ֆրանսիայից:

Ներկայումս ԵԿԲ-ն երեք շենք է զբաղեցնում Ֆրանկֆուրտի կենտրոնում, սակայն բանկը 2014 թվականին պատրաստվում է տեղափոխվել իր նոր կենտրոնակայանը, որը կառուցվում է քաղաքի արևելյան հատվածում:

EU Inside/ԵՄ ներսից



Լրիվ անվանումը՝ Սլովակիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Բրատիսլավա:
Պետական կառուցվածքը՝ պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 48 845 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 5.4 մլն:
Պետական լեզուն՝ սլովակերեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:

Սլովակիան ու ֆուլյարան

«Նվազում են՝ ինչպես շնչում են»։ այս արտահայտությունը հատուկ է ֆուլյարա կոչվող գործիքը նվագողներին: Եվ իսկապես, այս գործիքով նվագելու համար կարևոր է ճիշտ շնչառությունը, որը կանխորոշում է հնչողության զեղեցկությունը:

Երեք անցքով փողային փայտյա այս գործիքը սլովակյան մշակութային ժառանգության մի մասնիկն է և համարվում է Սլովակիայի ժողովրդական գործիքների թագուհին:

Ի սկզբանե ֆուլյարա նվագում էին հովիվները, մինչդեռ այսօր այն արժանանում է պրոֆեսիոնալ երաժիշտների ուշադրությանը: Արտաքինից ֆուլյարան սովորական ֆլեյտա է հիշեցնում, միայն թե չափսերն են տարբեր: Դրա երկարությունը տատանվում է 120-210 սանտիմետրի սահմաններում: Ավանդական ֆուլյարան պատրաստվում է ձեռքով՝ հիմնականում թխկի կամ ռոբինիա (սպիտակ ակացիա) ծառերի փայտից: Նախքան գործիքը պատրաստելը փայտը մեկ ամիս շարունակ չորացվում է՝ լավ հնչողություն ստանալու նպատակով:

Իր ինքնատիպության համար 2005 թ. ֆուլյարան ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության հեղինակավոր ցանկում: Այս գործիքի պատվին Սլովակիայում ամենամյա փառատոն է անցկացվում:

Խաղողի ամենահին որթն աշխարհում

Սլովենիայի Մարիբոր քաղաքում է գտնվում խաղողի՝ աշխարհում ամենահին որթատունկը: Այն ավելի քան 400 տարեկան է և գրանցված է Գինես-սի ռեկորդների գրքում:

Ամեն տարի այս հնամենի որթը տալիս է խաղողի այնքան բերք, որից հնարավոր է լինում ստանալ 25 լիտր գինի՝ տարեկան մոտավորապես 100 շիշ: Գինու բացառիկության և բերքի

քիչ քանակության պատճառով քաղաքային իշխանությունների որոշմամբ այս գինին խմում են միայն բացառիկ դեպքերում և բացառիկ առիթներով:

Աշխարհի ամենահին որթատունկի խաղողից ստացված գինիները պահվում են Եվրոպայի գինու ամենամեծ մառաններից մեկում, որը կրում է «Մարիբորի ստորգետնյա աշխարհ» անվանումը:



Լրիվ անվանումը՝ Սլովենիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Լյուբլյանա:
Պետական կառուցվածքը՝ պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 20 273 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 2 մլն:
Պետական լեզուն՝ սլովեներեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:



Լրիվ անվանումը՝ Հունգարիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Բուդապեշտ:
Պետական կառուցվածքը՝ պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 93 000 քառ. կմ:
Բնակչությունը՝ 10 մլն:
Պետական լեզուն՝ հունգարերեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:

Հունգարիան և «ռուբիկ-կուբիկ»-ը

Հունգարիայում է ծնվել աշխարհում հայտնի և երբևէ ամենաշատ վաճառված խաղալիքը՝ «ռուբիկ-կուբիկը»: 1974 թվականին հունգարացի ճարտարապետ և դասախոս Էրնյո Ռուբիկը հնարել է մեխանիկական գլուխկոտորակ՝ «կախարդական խորանարդ», որը, սակայն, աշխարհին հայտնի է դարձել հեղինակի անունով՝ «Ռուբիկի խորանարդ», իսկ խոսակցական լեզվում պարզապես՝ «ռուբիկ-կուբիկ»:

Մինչ օրս աշխարհում վաճառվել է ավելի քան 300 միլիոն «ռուբիկ-կուբիկ»: Այս ծավալը պատկերացնելու համար, ասենք, որ եթե բոլոր այդ խորանարդներն իրար վրա դրվեն, երկարությունը կծօզի Հարավային բևեռից մինչև Հյուսիսային բևեռ:

«Ռուբիկ-կուբիկ»-ի առաջին համաշխարհային առաջնությունն անցկացվել է Հունգարիայում 1982 թ.: 21-րդ դարում «ռուբիկ-կուբիկի» մրցումներ են անցկացվում նաև այլ անվանակարգերում՝ հավաքել մեկ ձեռքով, հավաքել ոտքերով, հավաքել փակ աչքերով և նույնիսկ հավաքել ջրի տակ՝ մեկ շնչով: Հավաքելու արագությամբ մինչ օրս չգերազանցված համաշխարհային ռեկորդ է սահմանել 14-ամյա ավստրալիացի Ֆելիքս Զեմդեբսը՝ 6.77 վայրկյանում:

ԵՎՍՍ. «Եվրոյով վճարումների միասնական տարածք»-ը (ԵՎՍՍ, անգլերեն հապավումը՝ SEPA) Եվրոպայում գործող «տարածք» է, որի շրջանակներում անհատ անձինք, ընկերությունները կամ այլ կազմակերպություններ կարող են կատարել և ստանալ անկանխիկ վճարումներ եվրոյով, ինչպես պետական սահմանների ներսում, այնպես էլ դրանցից դուրս ընդ որում նույն բազային պայմաններով, իրավունքներով և պարտականություններով՝ անկախ իրենց գտնվելու վայրից: ԵՎՍՍ-ն գործում է որպես ներքին վճարումների միասնական շուկա և թույլ է տալիս հաճախորդներին վճարումներ կատարել նույնքան հեշտորեն ու՝ էժան, որքան իրենց բնակության վայրերում: ԵՎՍՍ-ի նախաձեռնությունն իրականացվում է Վճարումների եվրոպական խորհրդի կողմից, որը հիմնադրվել է 2002 թվականին: Խորհուրդը եվրոպական բանկային ոլորտի որոշումներ կայացնող և համակարգող հիմնական մարմինն է՝ վճարումների հետ կապված հարցերի գծով:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
 21 Frik str, Yerevan, Republic of Armenia (entrance from Proshyan str.)
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia
 The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
 Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ֆրիկի փողոց 21, (մուտքը՝ Պոռչյան փողոցից)
 Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, Էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia
 Հարցորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը